



ՀՀ Արարատի մարզ գ. Լանջազատ /Զովաշեն/
Հեռ. (Тел.) 091-58-28-87

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2015 թվականի հունվարի 14 – ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանը, քարտուղարում էր գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Մելրոնյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հ. Դանիելյանը, ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի բնտանեկան բուժբույրը, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ -- Արարատի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանի հաշվետվությունը 2014 թ. երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՅ , որ

2014թ. երկրորդ կիսամյակի ընթացքում Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 252 ընդունելություն:

Ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 210 տեղեկանք, ստացել 84 - ից ավել պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2014թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ , մաքրվել են ոռոգման ջրատարները, անցկացվել և ցերեկային լուսավորություն համայնքի Դ. Կանայան, Խողյակով և Նիկոլ Աղբալյան փողոցներում:

Ամբողջ համայնքի տարածքում տեղադրվել են նոր աղբամաններ:

Ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազորման, սահմանների ճշտորման և հողատեսերի փոփոխման և ձեակերպման աշխատանքներ :

Համայնքի ղեկավարի աջակցությամբ ընթացքի մեջ է համայնքի բնակիչներին բուժաքիմիկատներով, և սերմերով ապահովելու հարցը: Համայնքի բնակչությանն անվճար տրամադրվել է 100 կգ առվույտի և 50 կգ եգիպտացորենի սերմեր:

2014թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա / հողի հարկ՝ 1302.5 հազար դրամ.

բ / գույքահարկ որից՝ շենք և շինություններ – 98.1 հազար դրամ, ավտոմեքենաներ – 1714.2 հազար դրամ

գ / տեղական սուրբ՝ 44.0 հազար դրամ

դ / ոչ հարկային եկամուտներ՝ 857.4 հազար դրամ

Համայնքում իրականացվել է մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությամբ նշվել է սեպտեմբերի 21 – ը՝ անկախության օրը , նշվել է նաև ուսուցչի օրը : Սեպտեմբերի 1-ին համայնքի 1 – ին դասարան հաճախող երեխաներին գյուղապետարանի կողմից տրամադրվել է նվերներ : Գեղեցիկ միջոցառումների շարք է կազմակերպվել երեխաների համար Նոր տարվա կապակցությամբ: Հրավիրված են եղել նաև լրագրողներ միջոցառումները լուսաբանելու համար:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1380.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հուղարկավորության նպաստ՝ 100.0 հազար դրամ

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 500.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1064.0 հազար դրամ.

2015թ 1– ին կիսամյակում նախատեսված է կուլտուրայի տան բակի բարեկարգում և ծառատունկ, փողոցների մասնակի բարեկարգում, խմելու և ոռոգման ջրի ցանցերի վերանորոգում և ջրատարերի մաքրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ